ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.06.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲՔԱ-LO-2020/67

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Բողոք բերող՝ «Արսսուս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Արսսուս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Քոյլոյանի, Հ. Ղազարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթ, աղբահանության և սանմաքրման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Արսսուս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Բողոքաբեր) կողմից 15.05.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Բողոքաբերը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով կայացնելու՝

- «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու որոշում,
- «Արսսուս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 15.05.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/67 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

26.05.2020թ.-ին և 05.06.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 26.05.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.06.2020թ.-ին:

2. «Արսսուս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Արսսուս» ՍՊԸ-ն 15.05.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1.1. Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) 20.03.2020 թվականին հայտարարել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթի հայտարարություն (այսուհետ նաև Ընթացակարգ), իր կարիքների համար՝ «աղբահանության և սանմաքրման համար անհրաժեշտ գույքի» ձեռքբերման նպատակով:

1.2.«ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Ընթացակարգի շրջանակում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել հայտ 2-րդ չափաբաժնի մասով:

1.3.Ընթացակարգի շրջանակում 2-րդ չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, իսկ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ հայտ է ներկայացրել մի քանի չափաբաժիններով՝ այդ թվում նաև, 2-րդ չափաբաժնով: Նշված ընկերությունները ներկայացրել են գնային առաջարկներ, որոնցից «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ 10.0 մլն. ՀՀ դրամը չգերազանցող, իսկ «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ 10.0 մլն. ՀՀ դրամը գերազանցող: Արդյունքում Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, իսկ 2-րդ և 3-րդ տեղերը զբաղեցրած մասնակիցներ են ճանաչվել, համապատասխանաբար «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ և «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊԸ: «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ չեն ներկայացրել հայտի ապահովումներ:

1.4.Հանձնաժողովը «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ կողմից հայտերը գնահատելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ երկու ընկերություններն էլ չեն ներկայացրել հայտի ապահովումներ:

1.5.«ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտով ներկայացվել է նաև հայտի ապահովում:

Գնումների մասին ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նույն օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Գնումների մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման.

Ընթացակարգի հրավերի 4.3. կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ

մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ.9 (2-րդ չափաբաժնի մասով)

Նշված իրավական նորմերի վերլուծությունից հետևում է, որ այն դեպքերում, երբ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով, որի պահանջը պետք է ներկայացվի նաև հրավերով: Ընդ որում հայտի ապահովման չափը պետք է հավասար լինի մասնակցի գնային առաջարկի առնվազն հինգ տոկոսին:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ պետք է արձանագրել հետևյալը, որ Ընթացակարգի հրավերով 2-րդ չափաբաժնի մասով նախատեսվել է հայտի ապահովման ներկայացման պարտադիր պայման, այսինքն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը: Սակայն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած մասնակիցներից 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցները չեն ներկայացրել հայտի ապահովումներ, ուստի նշվածով պայմանավորված՝ նրանց կողմից ներկայացված հայտերը ենթակա էին մերժման: Նույն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով հաջորդ 3-րդ տեղ է զբաղեցրել «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերությունը, ում կողմից ներկայացված հայտը համապատասխանում է հրավերով ներկայացված պահանջներին՝ այդ թվում ներկայացվել է հայտի ապահովումը: Հաշվի առնելով նշվածը պետք է արձանագրել, որ Հանձնաժողովի կողմից 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ «ՎՈԼՅՈՒՄ ԳՐՈՒՊ» ՍՊԸ և «ԲԻԳ ՊԼԱՍՏ» ՍՊԸ հայտերը գործող օրենսդրության պահանջներին համապատասխան մերժվելու պարագայում, որպես հաջորդ նվազագույն գին առաջարկաց մասնակից կընտրվեր «ԱՐՍՍՈՒՍ» ՍՊ ընկերությունը:»:

Ելնելով վերոգրյալից՝ Բողոքաբերը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով կայացնելու՝

- «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու որոշում,
- «Արսսուս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշում:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 15.05.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/7239-2020 գրությամբ դիմել է Երևանի քաղաքապետարանին՝ հնարավորություն տալով «Արսսուս» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 19.05.2020թ.-ին ներկայացրած թիվ 02/61-8058 դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Գտնում ենք, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման հետևյալ հիմնավորումներով:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի համար աղբահանության և սանիտարական մաքրման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում գնահատող հանձնաժողովը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է հայտարարել «Վոյյում Գրուպ» ՍՊԸ-ին, որպես բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Բողոքաբերը բողոքի հիմքում դնելով «Գնումների մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի և 32-րդ հոդվածի 1-ին մասի,ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 9-րդ ենթակետի և գնման ընթացակարգի հրավերի 4.3. կետի 4-րդ ենթակետի պահանջները հանգել է այն եզրակացության, որ եթե հավերով, 2-րդ չափաբաժնի համար պատվիրատուի կողմից նախատեսվել է հայտի ապահովման ներկայացման պարտադիր պայման, ապա անկախ այն հանգամանքից երբ մասնակիցը ներկայացնում է գնումների բազային միավորի տասնապատիկը չգերազանցող գնային առաջարկ՝ պետք է տրամադրի հայտի ապահովում:

Սակայն՝ գնահատող հանձնաժողովը «Վոյյում Գրուպ» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու որոշում կայացնելիս հիմք է ընդունել Կարգի 32-րդ Կետի 17-րդ ենթակետի «ա» պարբերությունը և հրավերի 7.2 կետի «ա» պարբերությունը, որոնց համաձայն՝ «Գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում են ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի

շրջանակում՝ մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/67 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից աղբահանության և սանմաքրման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման նպատակով 20.03.2020թ.-ին հայտարարավել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ), որը խմբավորված է հինգ /5/ չափաբաժիններում:

Մրցույթին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել նաև «Արսսուս» ՍՊԸ-ն ու «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով, և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն՝ 1-ից 4-րդ չափաբաժինների մասով:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 30.04.2020թ.-ի կայացրած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝

- 2-րդ չափաբաժնի համար նախահաշվային գին է նշվել 10 175 040 ՀՀ դրամ:

- «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի համար որպես պայմանագրի ընդհանուր գումար նշել է 9 666 288 ՀՀ դրամ, «Արսսուս» ՍՊԸ-ն՝ նշել է 10 175 040 ՀՀ դրամ, իսկ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն նշել է՝ 10 164 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի 05.05.2020թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ն, 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն, իսկ 3-րդ տեղ՝ «Արսսուս» ՍՊԸ-ն:

«Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումներ չեն ներկայացվել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Արսսուս» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է ամբողջությամբ մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան

ապրանքների, և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ հայտի ապահովումը նշված օրենքով նախատեսված դեպքերում մասնակցի կողմից հայտով ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող միջոց է:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով, հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պահվում է լիազոր մարմնի անվամբ բացված գանձապետական հաշվում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «ե» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հրավերով նախատեսված դեպքերում հայտի ապահովում: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի հաստատած հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված լինելու դեպքում՝ հայտի ապահովում և այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ընդ որում՝ որոշ բացառություններով, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողողոքներ քննող անձն արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանի կողմից աղբահանության և սանմաքրման համար անհրաժեշտ գույքի ձեռքբերման նպատակով 20.03.2020թ.-ին հայտարարված «ԵՔ-

ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթը խմբավորված է հինգ /5/ չափաբաժիններում, որից 2-րդ չափաբաժնի համար սահմանված նախահաշվային գինը կազմում է 10 175 040 ՀՀ դրամ:

«Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի համար որպես պայմանագրի ընդհանուր գումար նշել է 9 666 288 ՀՀ դրամ, «Արսսուս» ՍՊԸ-ն՝ նշել է 10 175 040 ՀՀ դրամ, իսկ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն նշել է՝ 10 164 000 ՀՀ դրամ:

Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումներ չեն ներկայացվել:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: …:

Կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:…:

Նույն կետի 17-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում են ըստ առանձին չափաբաժինների: Եթե չափաբաժիններով կազմակերպված գնման ընթացակարգի շրջանակում մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավելի չափաբաժինների համար, ապա կարող է ներկայացնել՝ ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ՝ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Հրավերի 4.3 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի

ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ. (2-րդ չափաբաժնի մասով):

Հրավերի 7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին, որը ենթակա է վերադարձման այն ներկայացրած մասնակցին՝ սույն ընթացակարգի շրջանակում պայմանագիրը կնքվելուց կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ սույն հրավերի 1-ին մասի 7.3 կետով նախատեսված դեպքերի:

Հրավերի 7.2 կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, եթե մասնակիցը հայտ ներկայացնում է մեկից ավել չափաբաժինների համար, ապա հայտի ապահովումը կարող է ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի համար առանձին, այնպես էլ մեկ հայտի ապահովում՝ բոլոր չափաբաժինների համար: Մեկ հայտի ապահովում ներկայացվելու դեպքում, դրա գումարը հաշվարկվում է ներկայացված չափաբաժինների գնային առաջարկների հանրագումարի նկատմամբ: Եթե ըստ չափաբաժինների ներկայացված գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է 10 մլն. ՀՀ դրամը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում:

Վերոնշյալ նորմերի լույսի ներքո, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը հայտի ապահովում ներկայացնում է հրավերով սահմանված պահանջի դեպքում, այն է՝ եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների

բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Որպես բացառություն Կարգով սահմանվել են դեպքեր, երբ հայտի ապահովում չի ներկայացվում, դրանք են այն դեպքերը, երբ գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ինչպես նաև՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում, երբ գնային առաջարկների հանրագումարը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, սակայն ըստ առանձին չափաբաժինների ներկայացված գնային առաջարկները չեն գերազանցում այդ չափը (10 մլն. ՀՀ դրամը):

Սույն գործի փաստերի համաձայն՝ մրցույթը կազմակերպվել է հինգ /5/ չափաբաժիններով: «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել միայն մեկ՝ 2-րդ չափաբաժնի համար՝ առաջարկելով 9 666 288 ՀՀ դրամ, իսկ «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել չորս չափաբաժինների համար, որից 2-րդ չափաբաժնի համար առաջարկել է 10 164 000 ՀՀ դրամ, որպիսի պայմաններում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Կարգի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված բացառությունը սույն դեպքում կիրառելի չէ, քանի որ 2-րդ չափաբաժնի համար սահմանված նախահաշվային գինը գերազանցել է 10 մլն. ՀՀ դրամը, իսկ «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել միայն մեկ չափաբաժնի համար, ուստի «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի (2-րդ չափաբաժնի համար) կողմից հայտով պետք է ներկայացվեր հայտի ապահովում՝ հրավերով սահմանված բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Բողոքներ քննող անձն, անդրադառնալով Բողոքաբերի կողմից բողոքով ներկայացված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու և «Արսսուս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշում կայացնելու պարտավորեցնելու պահանջին, հայտնում է հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝

շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը (վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու / փոփոխելու / նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Վերոգրյալ իրավանորմի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովում չներկայացնելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին մրցույթի 2-րդ չափաբաժնի մասով «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու և «Արսսուս» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու որոշում կայացնելու պարտավորեցնելու պահանջի բավարարմանը, քանի որ Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն՝ հայտում ներառվող միայն մեկ փաստաթղթի՝ գնային առաջարկի համար, ընդ որում՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված անհամապատաս-խանություններն ենթակա են շտկման, ուստի Բողոքներ քննող արձանագրում է, որ տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովի կողմից կիրառելի է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ բողոքով ներկայացված և առկա փաստական հանգամանքները հաստատված ու ապացուցված համարելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված պահանջի բավարարմանը, իսկ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ի և «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ի

հայտը մրցույթի հրավերով նախատեսված պայմաններին բավարար գնահատելու մասին որոշում, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Կարգի 41-րդ կետի դրույթներով սահմանված պահանջները:

Ուստի սույն դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/13» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը պետք է կիրառի Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթները և «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ին ու «Բիգ Պլաստ» ՍՊԸ-ին առաջարկ ներկայացնի շտկել սույն որոշմամբ արձանագրված՝ վերջիններիս հայտերում առկա անհամապատասխանությունները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Արսսուս» ՍՊԸ-ի կողմից 15.05.2020թ.-ին թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/67 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**